ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ. Գ.

Արդի դարաշրջանում պետությունը ինչպես համամարդկային, այնպես էլ համազգային արժեքների ներուժը գործողության մեջ դնելու կարևոր լծակ է: Այդպիսի առաքելություն ունի ազգային պետությունը նաև կրթության ոլորտում: Ազգային պետության բարոյաքաղաքական ու կրթամշակութային գործառույթների դերը դեռևս Հեգելն էր գիտակցում քաղաքացիական հասարակության կայացման ասպարեզում[1]:

Հեգելի սոցիալական ժամանակաշրջանին հաջորդած սոցիալ-քաղաքական ամբողջ պրակտիկան փաստել է, որ, իրոք, ազգային պետությունը կարող է ձևավորվող անհատի գիտելիքները, նրա կամային որակները նպատակաուղղել ազատության գաղափարի իրականացմանը: Վերջինս ունի իր համապատասխան գործընթացը, որը կարող է սկզբնավորվել միայն ազգային պետության սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշմամբ:

Արդի փուլում ամեն մի ազգային պետության համար կարևոր նշանակություն պետք է ունենա էթնոհանրույթի գենետիկական վերարտադրության հիմնախնդիրը, որի լուծումը ստանում է համազգային նշանակություն:

Անհերքելի է այն, որ կրթության՝ սոցիալական ինստիտուտի հիմնախնդիրը սոցիալական քաղաքականության անբաժան մասն է: «Սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշում» դատողության բովանդակությունը ենթադրում է այդ երկու արժեքային համակարգերի՝ սոցիալական քաղաքականության և կրթության փոխմիասնությունը: Այդպիսի մոտեցումը կապահովի ազգային պետության՝ որպես էթնոհանրույթի ոչ միայն գենետիկական վերարտադրությունը, այլ նաև նրա սոցիալ-մշակութային կերպարի արդիականացումը: Վերջին հաշվով հասարակության ամեն մի ոլորտի առնչությամբ ծագում է հետևյալ հարցը՝ «ինչի՞ համար են քաղաքականությունն ու իշխանությունը»: Այս հիմնախնդիրը մենք դիտարկում ենք սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշման հետ կապի մեջ, ընդ որում, էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացի հայեցակետից:

Բանն այն է, որ սոցիալականը և կրթականը փոխմիասնականորեն նըպաստում են և՛ էթնոհանրույթի շարունակականությանը, և՛ արդիականացվելուն, հատկապես ազգային-քաղաքական միասնությունը ձևավորելու առումով:

Հասարակության սոցիալական երկփեղկվածությունը առնչվում է անհատի կրթամշակութային ոչ բավարար մակարդակին: Սա փաստում է սոցիալականի հարաբերականորեն տարանջատված լինելը: Սոցիալականը հասարակության մյուս ոլորտներին հակասելու պատճառով է հասարա-

[1] **Гегель Г.,** *Работы разных лет, т. 2, М., 1971, с. 163.*

կությունը բաժանվում առճակատվող արժեքային կողմնորոշումների: Ահա այստեղ է, որ քաղաքականությունն ու իշխանությունն իրենց նպատակասլաց գործունեությամբ կարող են էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբման գործընթացը կյանքի կոչել՝ ազգային կրթությունը դարձնելով սոցիալ-քաղաքական բախումների աստիճանական հաղթահարման առանցքային գործոններից մեկը: Այս առնչությամբ հարկ է նշել, որ ազգային պետության՝ որպես սոցիալ-կրթական գործառույթով քաղաքական արժեքի, էթնոմշակույթի զարգացման ուղղվածությամբ գործելն արդեն իսկ կրթության սոցիալ-էթնիկական կարևորության գաղափարի սերմանումն է:

Ազգային պետության սոցիալ-կրթական կողմնորոշումը քաղաքական սուբյեկտի այնպիսի գործունեություն է, որը կարելի է բնորոշել որպես քաղաքական արժեք: Ժամանակակից քաղաքագիտական գրականության, հատկապես բուհական դասագրքերի մակարդակով «քաղաքական արժեք» եզրի բովանդակությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Քաղաքական արժեքները սոցիալական արժեքների տիպ են, որոնք ընդունվում են ոչ թե առանձին մարդկանց կամ նույնիսկ հասարակության որոշակի բջիջների, այլ սոցիալական մեծ խմբերի ու հանրույթների կողմից»[2]: Նշված մեկնաբանման համաձայն՝ «սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշում» քաղաքական գործընթացն ունի սոցիալ-էթնիկական նշանակություն հենց այն պարզ պատճառով, որ նպաստելու է էթնոհանրույթի ժողովրդավարական համախմբմանը, որն էլ կազմում է «քաղաքական իշխանություն» կատեգորիայի սոցիալ-բարոյական հենքը:

Ազգային արժեքների, նորմերի ու սկզբունքների անհատական յուրացումը հակասական ու բարդ գործընթաց է: Դա արդեն իսկ բախվող արժեքների գործընթաց է: Սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշումն ինքնաբերաբար առաջ է բերում այդ հիմնախնդրի հանդեպ տարբեր դիրքորոշումներ ունեցող սոցիալ-քաղաքական ուժերի միջև բախումնային վիճակ: Դա իր բարդությամբ ու հակասականությամբ դրսևորվել է սոցիալական մի շարք ժամանակահատվածներում՝ տարբեր ժողովուրդների նոր ու առաջադեմ կրթամշակութային դաշտի ձևավորման գործընթացում: Այսպես, դեռևս XX դ. սկզբին գերմանացի նշանավոր մտածողներից Կ. Մանհեյմը տեղին է նկատել կրթության շուրջ ու նրա նկատմամբ ձևավորվող ու դրսևորվող սոցիալ-քաղաքական դիրքորոշումների բախումնային բնույթը: «…Ժամանակակից կրթությունը,- գրում է նա,- պայքարի ոլորտ է: Այն սոցիալական ձգտումների և միտումների պայքարի մանրանկարչական պատճենահանումն է: Դրան համապատասխան էլ կրթված մարդն իր հոգևոր հորիզոնում պատճառականացվում է»[3]:

Ազգային պետության՝ որպես սոցիալական համերաշխությունն ապահովող կառույցի կոնտյան հայեցակարգն արդի փուլում, մեր կարծիքով, պետք է որ մտորումների տեղիք տա ազգային ընդհանուր կրթության կազմակերպման քաղաքական ուղղվածության առումով: Սոցիոլոգիայի հայրը արդարացի էր, որ պետության շնորհիվ ապահովվող զանգվածային

---

[2] Каменская Е. Н., *Политология. Учебное пособие, М., 2006, с. 289.*

[3] **Манхейм К.**, *Идеология и утопия (Диагноз нашего времени, М., 1994, с. 133).*

կրթության միջոցով կարելի է հաղթահարել սոցիալ-քաղաքական բախումները և իրական նախապայմաններ ստեղծել հասարակության փոխակերպման համար: Կրթության էթոնոպաստ գործառույթը Կոնտը բնորոշում էր որպես դրական գաղափարների ամբողջությամբ ժողովրդական զանգվածի պատկերացումների փոփոխություն՝ համերաշխորեն ապրելու նպատակով ստեղծել էթոհանրույթի հաջորդ սերունդների համար ընդհանուր ոգի[4]:

Ինչպես տեսնում ենք, կրթության և պետության սոցիալ-քաղաքական փոխառնչությունների հիմնախնդիրը դիտարկման է արժանի ընդհանրապես և առաջին հերթին՝ քաղաքագիտության առարկայական դաշտի հայեցակետից: Այսպես, Ա. Պանարինը այս հիմնախնդիրը նկատի ունի, երբ արժեքների և շահերի տեսանկյունից է մեկնաբանում քաղաքականությունը: Պարզել իրական քաղաքականության զսպանակ-ները նշանակում է պարզել այդ քաղաքականության մեջ շահերը և հետևաբար՝ հասնել այդ շահերի առումով համաձայնության: Բացահայտել քաղաքական իրա-դարձությունների զսպանակները նշանակում է ուսումնասիրել արժեքների բախումներն ու արժեքային դիրքորոշումների համաձայնության միջոցների հիմնախնդիրը[5]:

Շատ ազգային պետություններ արդի փուլում սոցիալ-քաղաքականի վերաիմաստավորման արդյունքում ձգտում են հաշվի առնել բախումնա-յին բացասական ազդեցությունը հասարակության սոցիալ-քաղաքական համախմբման գործընթացի վրա: Այդ վերաիմաստավորման բովանդակությունը արտահայտվում է ժողովրդի սոցիալ-կրթական մակարդակի համարժեքության ու դրա քաղաքական գաղափարի արմատավորման մեջ: Սոցիալ-քաղաքական արժեքային կողմնորոշումների միջև բախումների ու դրանց հաղթահարման ուղու դիտարկումը՝ կապված կրթության քաղաքական նշանակության հիմնախնդրի հետ, կնպաստի ազգային պետության սոցիալ-կրթական քաղաքականության էթնիկական ուղղվածության գաղափարի կարևորության ըմբռնմանը: Այն հնարավորություն կընձեռի հատկապես ուսումնառության ժամանակաշրջանը նկատի ունենալ իբրև ազգային պետության համար ռազմավարական կարևորություն ներկայացնող գործոն՝ ձևավորելու ազգային-քաղաքական բովանդակությամբ օժտված էթնոֆոր: Դրանով իսկ, ինչպես ժամանակին գերմանական մանկավարժական դեմքերից մեկը՝ Օ. Բոլնովն է բնորոշում, կձևավորվի ոչ միայն անհատի վստահության գաղափարը քաղաքական կեցության, այլ նաև նրա դիրքորոշումն այդ աշխարհի հանդեպ[6]:

XX դ. վերջին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովի կողմից XXI դ. դաստիարակության մասին զեկույցում նշվեցին սոցիալ-քաղաքական ու մանկավարժական գիտությունների առջև ծառացած չորս հիմնական սկզբունքներ, որոնք դառնալու են ապագա ազգային կրթության իմաստային

---

[4] **Конт О.,** *Курс положительной философии (Мир филисофии, ч. 1, М., 1991, с. 64).*
[5] **Панарин А.,** *Политология, М., 2000, с. 167.*
[6] **Bollnow O. F.**, *Neue Gebornheit. Das Problem einer Uberwindung des Existenzilismus, Stuttgart, 1979, S. 49-51.*

չափորոշիչները՝ ա) ապրել, բ) գիտենալ, գ) կատարել, դ) ապրել համատեղ: Հանձնաժողովի բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ չորրորդ սկզբունքն ամենագլխավորն է: Միևնույն ժամանակ շեշտվում էր, որ համատեղ ապրելու ձգտումը երբեք էլ հենց այնպես, ինքն իրեն չի ձևավորվում և այդ իսկ պատճառով էլ վերածվում է քաղաքականության հիմնախնդրի[7]: Ազգային պետության սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշումը ազգաբնակչության մեծամասնության կողմից ընդունվող տարբեր շահերի ճանաչման գաղափարն է, որն էլ արդեն իսկ բախումների հաղթահարման սոցիոմշակութային և բարոյաքաղաքական նախապայման կարող է ճանաչվել:

«Կոնֆլիկտ» հասկացության մեջ ընդհանրապես նկատի են առնվում սոցիալ-մշակութային սկիզբները: Դրանց տրամաբանությամբ են առաջանում սոցիալ-քաղաքական բնույթի բախումները: Վերջիններս հիմնականում առնչվում են էթնոհանրույթի կրթական մակարդակին ու բովանդակային ուղղվածությանը, և այս հարցում ազգային պետության դերն ու գործառութային լծակների ազդեցությունը հնարավոր չէ անտեսել:

Եթե ազգային ու մարդկային արժեքներն իրենց բովանդակությամբ համապատասխանորեն չեն կիրառվում սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների կատարելագործման նպատակով, ապա ոչ միայն այդ արժեքների համաներդաշնակման գործընթացն է վերացականության շրջանակներում մնում, այլ նաև ինքնախաբեության անցանկալի փակուղի կարող է ստեղծվել: Եթե մոտենալու լինենք կրթության սոցիալ-էթնիկական նշանակությանը՝ համընդհանուր ազգային արժեք լինելու հայեցակետից, ապա իրավիճակը նախանձելի չէ: Վերջինս արտահայտվում է հիմնականում ազգային կրթության՝ որպես քաղաքական արժեքի, ընդհանուր ճանաչման սոցիալ-հոգեբանական նախադրյալների շրջանցումով: Ինչքան էլ որ կրթական համակարգի բարելավման ուղղությամբ հրաշք-գործընթացների մասին խոսվի (նույնիսկ Բոլոնիայի հռչակագրի պարագայում), միևնույն է, այդ բնագավառում պատկերացումները կրթության մասին երկփեղկված, բախումնային տրամաբանությամբ կդրսևորվեն, քանի դեռ կրթության հանդեպ փոփոխության չի ենթարկվել այն սոցիալական հոգեբանությունը, որը պայմանավորված է տվյալ սոցիալ-քաղաքական արժեքային իրական կողմնորոշմամբ: Սա էլ հիմնականում կրթության հարցում քաղաքական նշանակության շուրջ արժեքային կողմնորոշումների բախման խորքային պատճառն է:

Այս հիմնահարցին է առնչվում Գ. Պողոսյանի աշխատությունը: Սոցիոլոգիական հետազոտությունների հիման վրա գրված իր գործում այս հեղինակը դիտարկման արժանի փաստարկներ է բերում, որոնց վրա կառուցում է խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ իր եզրակացությունները: 90-ական թթ. սկզբին գործընթացի մեջ մտնող բարեփոխումների նկատմամբ հայ հասարակության սոցիալ-քաղաքական արժեքային կողմնորոշման (ժողովրդավարության, ազգային անկախության և դրանց

[7] **Ануфриев Е. А.,** *Политическая педагогика в гуманитарном образовании современной России (Вестник МГУ. Сер. 18. Социология и политология, 2001, N 4, с. 122-123).*

համանման այլ արժեքների ուղղությամբ) ու դրան հաջորդած բարեփոխումների վերլուծությամբ բացահայտվում է, որ այդ հասարակությունը հայտնվել է երկփեղկված իրավիճակում: Դրա պատճառով, ինչպես իրավացիորեն նկատում է հեղինակը, մարդիկ մեկուսանում են քաղաքական գործընթացներից՝ հրաժարվելով նույնիսկ ընտրություններին մասնակցելուց[8]. մի խոսքով, հայկական ընտրազանգվածը ձեռք է բերում քաղաքական անտարբերությունն արձանագրող հատկանշական ուղղվածություն: Հարկ է նշել, որ այս առումով կարելի է պատկերացնել, թե ինչ անցանկալի ու վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ քաղաքացիների անտարբերությունը քաղաքականության նկատմամբ, և որ թոքվիլյան քաղաքագիտական տերմինաբանությամբ ասած՝ դա հենց «ժողովրդավարության այլասերումն է», քանի որ քաղաքացիների մասնավոր կյանքը պահանջում է էներգիայի այնպիսի ծախսումներ, որ կասեցնում է համապատասխան ճանաչողական որակների ձեռքբերումը, և որի պատճառով էլ նրանք խուսափում են քաղաքականությունից[9]:

Նման իրավիճակը չէր լինի, և այստեղ մենք համամիտ ենք հեղինակի հետ. եթե եվրոպական ժողովրդավարության սկզբունքներից մեկին համապատասխան՝ համազգային նշանակության որոշումներին մարդիկ մասնակից դառնային, դրան պատրաստ պետք է լինեին ոչ միայն իշխանությունները, այլև ազգային դպրոցը:

Կրթությունը, իրոք, յուրատիպ իշխանություն է, հատկապես սոցիալ-քաղաքական իրազեկվածության հայեցակետից, որի ուղղվածությամբ խորհրդային դպրոցը օբյեկտիվության, ստեղծագործական ինքնուրույնության և վերջապես դրանց հիման վրա քաղաքականապես գրագետ ակտիվության նախադրյալներ չէր ստեղծել: Ո՞ր դեպքում մեխանիզմի կիրառությունը մեր հասարակությունը դուրս կբերի սոցիալական արդարության դաշտ, կմեղմացնի ու աստիճանաբար նվազագույնի կհասցնի արժեքային կողմնորոշումների բախումնայնությունը: Կարծում ենք, դրա կարևոր գործոնը քաղաքականությունը բոլոր ուղղվածություններով մարդկանց առնչվող արժեքի վերածելն է: Իսկ փոխակերպվող հասարակության մեջ այդ քաղաքականության իրականացնողները մարդիկ են:

Դեռևս XX դ. 30-40-ական թթ. Չիկագոյի գիտական դպրոցի ներկայացուցիչ Հ. Լասուելը[10], կարևոր համարելով մակրո- և միկրոմակարդակների քաղաքականության համամիասնականացումը, նշում էր հնարավորինս ընդարձակվող քաղաքական դաշտի փաստի ընդունումը: Խոսելով իր տեսության ամբողջականության մասին՝ նա նկատի ունի հետևյալը. հասարակության նկատմամբ ամբողջական հայեցակարգի զարգացման գործում մեծ ավանդ ունեցավ մարքսիզմը, այնուամենայնիվ, նրանում բացակայում էր անհատի «միկրոտեսությունը»: Ներառելով այն քաղաքական առարկայական դաշտի մեջ՝ կարելի է դասակարգերի մասին հայեցակարգի սահմանափակումներից դուրս գալ և նկատի ունենալ հա-

---

[8] **Погосян Г. А.,** *Армянское общество в трансформации, Е., 2003, с. 352.*
[9] **Токвиль А.,** *Демократия в Америке, М., 2000, с. 320-326.*
[10] **Лассуэл Г.,** *Психопатология и политика, М., 2005.*

սարակության մեջ գոյություն ունեցող բոլոր խմբերը, որոնք ներգրավվելու են քաղաքականության մեջ:

Պետությունը նա մեկնաբանում է որպես համանման սուբյեկտիվ իրադարձությունների տարաժամանակային բազմություն: «Սուբյեկտիվ իրադարձությունը», որը պետության հատկանշական գծի ապացույցն է, հանդես է գալիս իր հանրույթին պատկանելու գիտակցմամբ, ընդ որում, նրա վսեմ պահանջներն ու սպասումներն ընդգրկելով հանդերձ: Պետության էությունը հենց դրա գիտակցումն է:

Այստեղ կարևորն այն չէ, որ Լասուելը ձգտել է չափից դուրս անհատականացնել քաղաքականը: Բանն այն է, որ նրա դրույթներում արժեքավորը անհատների՝ իրենց հանրույթի պատկանելության գիտակցման գործընթացի վերհանումն է, որն անժխտելիորեն կարևոր է այսօր՝ նրա բնութագրմամբ, պետության կայացման հարցում: Վերջինիս հայեցակետից էլ կարելի է կրթությունը նկատի ունենալ որպես քաղաքական արժեք:

Հանրահայտ է, որ քաղաքական մշակույթի՝ որպես անհատի և քաղաքական համակարգի միջև կապող օղակի բնորոշումը կապված է Գ. Ալմոնդի անվան հետ: Կանգ չառնելով բոլոր այն բնորոշումների վրա, որոնք այսօր դեռևս ընդհանուր հայտարարի չեն բերել «քաղաքական մշակույթ» հասկացության բովանդակությունը, հնարավոր չէ շրջանցել ամերիկյան քաղաքագիտական մտքի ներկայացուցիչ Լ. Պայի յուրահատուկ ձևակերպումը. քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքականության սուբյեկտիվ չափորոշիչ կամ ինտերնալիզացիա (ներքնայնացում, խոսքը վերաբերում է քաղաքական արժեքներին, կազմում է քաղաքական ունիվերսումի կարևորագույն մասը)[11]: Անհատականի իմաստայինն այս հարցում կարևորվել է նաև քաղաքական մշակույթի հետազոտողներից մեկի՝ Փ. Դիասի կողմից: Նա սահմանում է քաղաքական մշակույթը՝ որպես անհատի սեփական տարածք քաղաքական աշխարհի մեջ[12]: Այն իրատես է դառնում ազգային կրթության, էթնոմշակութային միջավայրի ստեղծման ու մակրոմակարդակի սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշման համատեքստում: Պատահական չէ, որ ժամանակակից քաղաքագիտական միտքն ավելի ու ավելի հակվում է այն գաղափարին, որի համաձայն՝ ոչ մի քաղաքական համակարգ ոչ մի երկրում չի կարող կայուն լինել, եթե այն սեփական քաղաքական մշակույթի արդյունք չէ ու պայմանավորված չէ արժեքանորմատիվային ու գաղափարաքաղաքական որոշակի չափորոշիչներով:

Սոցիալ-պատմական ժամանակաշրջանն իր որոշակի բնութային ուղղվածությունը հաղորդում է տվյալ էթնոհանրույթի քաղաքական մշակույթին՝ իբրև արժեքանորմատիվայինի դրսևորման պայման: Այսպես, Վ. Վեմերը, իր հոդվածում դիտարկելով քաղաքական մշակույթի՝ արժեքանորմատիվայինով պայմանավորված լինելու հանգամանքը, նշում է, որ

[11] Մեջբերումն ըստ Малинова О. Ю., *Политическая культура в российском научном дискурсе (Полис, 2006, N 5, с. 108).*

[12] *Paradigma politische Kultur/ Ivand Wolf Michel. Opladen, 1985, S. 475.*

ԳԴՀ-ն և ԳՖՀ-ն, որոշակի պատմական ժամանակահատվածում ձեռք բերելով քաղաքական մշակույթի երկփեղկվածություն, այնուամենայնիվ, փաստագրեցին ազգայինի առանձնահատկությամբ պայմանավորված լինելը և միևնույն ժամանակ՝ կրթամշակութային բովանդակությամբ դրրսևորվելը[13]: Դրանով էլ կարելի է հիմնավորել, որ Գերմանիայի հետպատերազմյան ապաֆաշիստականացման գործընթացը հաջողվեց ոչ միայն գերմանական ժողովրդի ընդհանուր մշակույթով, նրա հումանիստական ու բարոյաքաղաքական մենթալիտետի գիտատեսական ու պատմական նախադրյալներով, մի խոսքով, այն ամենով, ինչը կապված էր այդ էթնոհանրույթի հոգեբանական կերտվածքի, աշխարհիմբռնման հետ, այլ նաև գործընթացի սկզբնավորման արտաքին գործառույթով: Գերմանիայի ժողովրդավարացման ու նացիզմի գաղափարախոսությունը հաղթահարելուն, նոր քաղաքական սերնդի քաղաքական հոգեբանությունը փոխելուն ուղղված, այսպես կոչված, «վերաուսուցման» ամերիկյան ծրագիրը ներառում էր հատկապես քաղաքացիական կրթությունը, որը համամիասնականացման միտումով ընդհանուր ու հումանիտար կրթության հետ կատարեց աննախընթաց մի առաքելություն: Չափորոշիչային դարձավ այդ ուղղությամբ 1948 թ. մայիսին Արևմտյան Բեռլինում բացված Ազատ համալսարանը, որը գործում է նաև այսօր:

Փաստորեն, XX դ. 50-60-ական թթ. արևմտագերմանական քաղաքական կեցության փոխակերպման գործում, ինչպես նշում է Թ. Յուրգենը, մեծ կարևորություն ձեռք բերեց ինչպես կրթամշակութային գործունեությունը, այնպես էլ քաղաքական մշակույթի՝ որպես հասարակության ժողովրդավարացման միջոցի ձևավորմանն ուղղված գիտատեխնիկական (հեղինակը նկատի ունի հատկապես Ալմոնդին և Վերբային) հայեցակարգով ժողովրդի քաղաքական գիտակցության կայացման խնդիրը[14]: Նոր բնույթի քաղաքական մշակույթի ձևավորման հարցում մակրոմակարդակի սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշման կարևորությունը կասկածից վեր է: Կրթական համակարգի բոլոր օղակների նման գործունեությունը հազիվ թե չնպաստի էթնոազգայինի շրջանակներում բախումների մեղմացմանն ու աստիճանաբար դրանցից ձերբազատմանը, քանի որ նույն նպատակասլացությամբ քաղաքական դիրքորոշումն ապահովում է մարդասիրական կրթությամբ սերունդների ոչ միայն հաջորդափոխությունը, այլ նաև ընդհանուր արժենորմատիվային սկզբունքների պահպանման շարունակությունը: Փաստորեն, հասարակությունն ու պետությունը ազգային կրթության հիման վրա ստեղծվող քաղաքական մշակույթով ավելի ու ավելի են փոխներթափանցվում: Եվ այստեղ է, որ պետությունը կարող է հանդես գալ քաղաքացիական հասարակության գոյավորմանը նպաստող գործառույթով: Եվս մի կարևոր հանգամանք: Մակրոմակարդակի սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշումը նոր ձևավորվող քաղաքական մշակույթի մեջ արտացոլում է էթնոհանրույթի՝

[13] **Wemer W.**, *Politische Kultur und deutsche Frage (Politische Kultur und deutsche Frage, Köln, 1989, S. 13-38).*

[14] **Jurgen T.,** *Demokratie und Staatsbewußtsein. Enwicklung der Politischen Kultur in der Bundesrepublik Deutschland (Polistische Kultur und deutsche Frage, 1989, S. 233-236).*

որպես կոգնիտիվ, հուզազգացմունքային ու արժևորման չափորոշիչներով քաղաքական սուբյեկտի վերածվելը, հատկապես ազգային պետության ղեկավարների նկատմամբ նրա վստահության հայեցակետից:

Դեռևս 1965 թ. Լ. Պայը գրել է. «…հասարակության ավանդույթները, նրա հասարակական-հրապարակային հաստատությունների ոգին, հույզերը և նրա անդամների կոլեկտիվ բանականությունը, որպես գործող կոդեքսներ, համարժեք են նրա ղեկավարների վարքագծին. *այդ ամենը ոչ թե պատմության պատահական արդյունքն է, այլ միասնական ամբողջի փոխկապակցված մասերն են, որոնք ձևավորում են փոխհարաբերությունների իրական շղթան»*[15] (ընդգծումը մերն է – Խ. Հ.):

Արդի փուլում տվյալ ազգային պետության սոցիալ-քաղաքական կայունության գործառույթներից քաղաքագիտական միտքն ու քաղաքական պրակտիկան բնորոշում են ժողովրդական կրթության և հասարակության հոգևոր մշակույթի ընթացքը: Պատահական չէ, որ կրթությունը, որպես ազգային սոցիալ-տնտեսական և բարոյաքաղաքական արժեք նկատի ունենալով, այսօր սոցիալական համարվող պետությունները ոչ միայն հանրակրթության, այլև բուհական և հետբուհական կրթության հեռանկարային ռազմավարություն են մշակում: Այն հատկապես էթնոհանրույթի սոցիալ-քաղաքական դիսկուրսի ձևավորման գործոն է: Դրա վկայությունն է ամբողջ ազգաբնակչության համար մի շարք երկրներում նույնիսկ բուհական կրթությունը հանրամատչելի դարձնելու գաղափարը: Այդ ուղղությամբ, այն էլ անվճար կրթության հնարավորության ընձեռմամբ, աչքի են ընկնում ԳՖՀ-ն և Ճապոնիան: Նման դիրքորոշումը, մեր կարծիքով, հատկապես հնարավոր է թվում անձի քաղաքական վարքագծի ձևավորման հարցում: Կրթական ռազմավարության մշակման գիտատեսական տեսանկյունից, կարծում ենք, կարելի է հենվել Ժ. Պիաժեի, Ա. Կոլբերգի և Ջ.Ադելսոնի ուսումնասիրությունների վրա: Դրանց համաձայն՝ բարոյական և ճանաչողական որակներով հասունացմանը զուգահեռ՝ երիտասարդությունը (հատկապես 18-25 տարեկան հասակում, որը, ի դեպ, համընկնում է բուհական կրթության ժամանակահատվածին) պետք է վերածվի սոցիալ-քաղաքական իրականությունը վերաիմաստավորող ու փոփոխության ենթարկող իրական սուբյեկտի: Դեռ ավելին, Ջ. Ադելսոնը երիտասարդությանը, հատկապես քաղաքական առումով, նկատի ուներ որպես իրականությանը ռոմանտիկորեն ընկալող ուժի[16]: Չժխտելով արդի փուլում կրթության արդիականացման ուղղվածությունների կարևորությունը՝ մեր ազգային պետությունը հակվելու է դեպի ազգաբնակչության մեծամասնության բուհական կրթություն ստանալու սոցիալ-կրթական կողմնորոշման քաղաքականության մշակումը: Այս ուղղությամբ ազգային պետության սոցիալ-կրթական կողմնորոշման հարցը վերաճում է անհատի հումանիզացման գործոնի: Այն ընկնում է ապագա ազգային քաղաքացիական հասարակության հիմքում: *Փաստորեն, էթնոֆորի քաղաքական հասունացման գործընթացին զուգահեռ՝ սոցիալ-կրթական ար-*

---

[15] Մեջբերումը՝ ըստ Օ. Մալինովայի վերը նշված հոդվածի, էջ 108:

[16] **Ольшанский Д. В.,** *Основы политической психологии, Екатеринбург, 2001, с. 135.*

ժեքային կողմնորոշումը՝ բարձրագույն կրթության մասսայականացումը կերպարանափոխվող հասարակության համար կլինի ոչ այլ ինչ, եթե ոչ կրթության արդիականացում:

Ազգային պետության սոցիալ-կրթական արժեքային կողմնորոշման, նրա ռազմավարության տարածքում աստիճանաբար պետք է որ բուհերում հայտնվի սոցիալ-մարդաբանական գիտությունների ուսուցման արմատական փոփոխման հիմնախնդիրը:

Նման գործընթացում, բացի ընդհանուր քաղաքական գիտելիքներով երիտասարդությանը զինելուց, կարևորվում է նաև մակրոմակարդակի քաղաքական մշակույթի ձևավորման հայեցակետը:

СОЦИАЛЬНО-ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ЦЕННОСТНАЯ ОРИЕНТАЦИЯ КАК ФАКТОР ПРЕОБРАЗОВАНИЯ ОБЩЕСТВА

ХАЧАТРЯН Г. Г.

Резюме

На современном этапе развития весьма актуальна проблема роли национального государства в трансформационных процессах, оптимальное развитие которых обусловлено его социально-образовательной ценностной ориентацией. Последняя способствует повышению интеллектуального потенциала национального государства, обеспечивая продвижение общества по пути экономических, социально-культурных и в конечном итоге политических преобразований. Этот альтернативный процесс решительным образом предопределяет успешность формирования политической культуры этнической общности, которая закладывает основы политико-коммуникативного характера модернизирующегося общества, т. е. демократического сближения нации и государства.